# ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
# ՈՐՈՇՈՒՄ N 134

ք. Երևան 12.08.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-22/6» և «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-2/4» ծածկագրերով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգերի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության և «Գոռ-Ման» ՍՊԸ-ի միջև 26.04.2024թ. կնքվել են ապրանքների մատակարարման ԳՀԱՊՁԲ-24-22/6-1 և ԳՀԱՊՁԲ-24-2/4-2 ծածկագրերով պետական գնման պայմանագրեր:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացված վերլուծությամբ պարզվել է, որ «Ավգոմե Շին» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 08428952) 2023 թվականի դեկտեմբերի 30-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, իսկ «Ավգոմե Շին» ՍՊԸ-ի և «Գոռ-Ման» ՍՊԸ-ի միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ «Գոռ-Ման» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Իշխան Ռազմիկի Ավագյանը հանդիսանում է նաև «Ավգոմե Շին» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն, ինչը տվյալ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում հիմք կհանդիսանար պայմանագիրը չկնքելու համար:

Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Գոռ-Ման» ՍՊԸ-ի միջև կնքված վերը նշված գնման պայմանագրերի 8.3 կետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. օգոստոսի 2-ին միակողմանի լուծել է նշված պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը, որոշում եմ՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ